Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՎՐԴ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԷՈՐԳ Զ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՈՔ

1938 թ. Խորեն Ա. Մուրադբեկյան Կաթողիկոսի առեղծվածային մահով սկսվում է Հայ Առաքելական եկեղեցու պատմության նոր շրջափուլ. շարունակվում են Հայ եկեղեցու նկատմամբ կիրառվող բիրտ ճնշումները եւ հայ ժողովրդին ապաքրիստոնեացնելու գործընթացը:

Համաձայն Խորեն Ա. Կաթողիկոսի՝ 1936 թ. ապրիլի 18-ին գրած կոնդակի՝ նրա մահվանից հետո՝ 1938 թ. ապրիլից, Հայ Եկեղեցու իրավազրկված ղեկը հանձնվում է Գէորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին: Թեպետ ծանր օրեր էին, եւ ժամանակը՝ բարդ, սակայն Սրբազանը առանց հուսահատվելու շարունակում է Մայր Աթոռի եւ Հայ Եկեղեցու գոյության պահպանման եւ հնարավոր գործունեության ուղիների որոնումը, ճիգ ու ջանք է գործադրում վերահաս փլուզման առաջն առնելու համար: 1941 թ. ապրիլի 10-13-ը Մայր Աթոռում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը պատգամավորների եւ եպիսկոպոսների թվի պակասության պատճառով ի վիճակի չէր կաթողիկոսական ընտրություն կատարել, եւ Գէորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը դարձավ ազգընտիր տեղակալ:

Սակայն եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները որոշ չափով փոփոխության ենթարկվեցին, երբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Ինչպես նկատել է Ս. Բեհբուդյանը. «Հայրենական պատերազմը հարկադրանք եղավ խորհրդային կառավարությանը՝ ժամանակավորապես հակաեկեղեցական քաղաքականությունը առերեւույթ դադարեցնելու, ժողովրդին համախմբելու եւ ընդհանուր թշնամու դեմ միասնական ճակատով կռվի հանելու համար»[1]:

Հասկանալի է, որ փոխվում էր նաեւ Հայ Եկեղեցու ներկայացուցիչների գործելակերպը: Այդ օրերին Գէորգ արքեպիսկոպոսն իր ազգային-հայրենասիրական կոչերով ոգեւորում եւ ոգեշնչում էր հայ ժողովրդին՝ ոչ միայն եռանդագին մասնակցություն ունենալու մարտերում եւ կռվելու թշնամու դեմ, այլեւ դրամական ներդրումներ կատարելու «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման համար: Նրա ձեռնարկած միջոցառումները դրական արդյունք են տալիս. դա մեծապես նպաստում է եկեղեցի-պետություն հարաբերությունների բարելավմանը, զարգացմանն ու լայն համագործակցությանը:

Եկեղեցու պատմության մեջ առանձնահատուկ կարեւորություն ունեն նրա հարաբերությունները պետության հետ: Հասկանալի է, որ այս հարցում մեծ դեր էր վերապահ-

1 «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գիրք Զ., Գէորգ Զ. Չորեքչեան Կաթողիկոս Ամենայն Հայոց, կազմեց Սանդրո Բեհբուդյանը, Երեւան, 1999, էջ 6:

վում ժողովրդին ու հայրենիքը կառավարող հասպատությունների առաջնորդներին: Աշխարհիկ եւ հոգեւոր իշխանության ներկայացուցիչների մրահորիզոնի լայնությունը, ազգի եւ երկրի կենսական շահերի գիտակցությունը, սեփականը հանրայինին ստորադասելու կարողությունը եւ մի շարք այլ գործոններ միանալով՝ կազմում են այն բարդ հանգույցը, որ անվանում ենք պետություն-եկեղեցի փոխհարաբերություններ:

Հայ Եկեղեցու գործերը վերահսկելու համար 1943 թ. հոկտեմբերին պետությունը ստեղծեց Հայ եկեղեցու գործերի խորհուրդ, սակայն կառավարությունը հայտարարեց, թե այն ստեղծված է երաշխավորելու խորհրդային սահմաններում խղճի ազատությունը: Իրականում այդ մարմնի ներկայացուցիչը Մայր Աթոռում խորհրդային կառավարության ականջն ու աչքն էր, Կաթողիկոսի գործունեության վերահսկիչը: Առաջին գործը, որ կատարեց խորհուրդը, այն էր, որ հաշվառեցին Հայաստանի բոլոր եկեղեցիները՝ որպես պատմական հուշարձաններ: Սակայն Գէորգ արքեպ. Չորեքչյանը Հայրենական պատերազմի տարիներին բանակին օգնելու դիմաց զգուշավոր կերպով խնդրեց մի քանի եկեղեցիների բացում: Պատմական այդ դիմումը գրված է 1944 թ. դեկտեմբերի 1-ին, որտեղ նա խնդրում է Ժողկոմխորհրդին. «Հայաստանում կար 500 եկեղեցի, իսկ այսօր կա ոչ ավելի քան վեց գործող եկեղեցի: Եթե առայժմ հաջողվի մեզ բանալ եւ կազմակերպել մոտավորապես եւս 15 եկեղեցի, կունենանք 21 եկեղեցի: Դարձ է ուրեմն, որ 450 եւ ավելի եկեղեցու համայնքներ մնացել են առանց եկեղեցու եւ առանց քահանաների»[2]:

Հենց այդ տարիներին ազգընտիր տեղակալը ոչ միայն նյութական օգնություն կազմակերպեց Կարմիր բանակին, այլեւ անձնական գրություններով, նամակներով հանդես էր գալիս մամուլում, որոնց մեջ կոչ էր անում հայ մարտիկներին, որ քաջաբար կռվեն, աղոթում էր Խորհրդային Միության հաղթանակի համար[3]:

Չորեքչյան Սրբազանի գործունեության արդյունքն այն եղավ, որ 1945 թ. նրան հաջողվեց բանալ 14 վանք ու եկեղեցի Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում: Այդպես շարունակվեց մինչեւ Ի. Ստալինի մահը, որից հետո առանձնակի իրավունքներ չտրվեցին եկեղեցուն: Դեռեւս օտարված էր մնում միաբանական շենքի մեծ մասը, որի համար Կաթողիկոսը «չափազանց կարեւոր կնկատեր շենքի ամբողջական հանձնումը ճեմարանի եւ վանքի պաշտոնեության համար»[4]: Բռնագրավված էին մնում Էջմիածնի Ս. Ծողակաթ, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե վանքերը, նաեւ նոր Վեհարանը: Այդ պայմաններում եկեղեցական գործերի խորհուրդը չէր բավարարվում միայն Հայաստանով, այլ ձգտում էր միջամտել նաեւ արտասահմանյան թեմերի ներքին գործերին՝ ստիպելով Սրբազանին, որ նա հորդորի՝ չկատարելու տեղական մարմինների որոշումները, որոնք հակառակ էին խորհրդային իշխանության շահերին: Այնուհանդերձ, Հայ Եկեղեցին չէր դադարեցնում իր ակտիվ գործունեությունը:

Առանց հուզմունքի չենք կարող կարդալ Ամենայն Հայոց Հայրապետության

2 Տեմ անդ, էջ 243:

3 Տեմ ՀՀ ԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 281:

4 Տեմ **Տ. Զարէհ աւ. քահանայ Արզումանեան,** Ազգապատում, Դ. հատոր, գիրք Բ., Նիւ-Եորք, 1997, էջ 224:

ազգընտիր տեղակալ Գէորգ արքեպս. Չորեքչյանի 1941 թ. դեկտեմբերի 8-ի դիմումը՝ ուղղված Անգլիական եկեղեցու հովվապետին Երկրորդ համաշխարհային պատերազմի ավերածությունների եւ քրիստոնեական եկեղեցիների միասնական պայքարի մասին[5]: Դարձյալ այդ օրհասական պահին Հայ Առաքելական եկեղեցին, անտեսելով անցյալի իր կրած վիրավորանքները, սարար է կանգնում Խորհրդային երկրին: Դա երեւում է 1944 թ. փետրվարի 4-ի Ավետիք Իսահակյանի եւ Հայոց Կաթողիկոսի Տեղապահ Գէորգ արքեպիսկոպոսի հարցազրույցից, որտեղ գլխավոր տեղ է բռնում հետեւյալ գաղափարը. «Հայ ժողովրդի մեջ բարձրացնել իր ունեցած հայրենասիրական զգացմունքները խորհրդային հայրենիքի-հարազատ Հայաստանի հանդեպ»[6]:

Ավետիք Իսահակյանը պատերազմի ահեղ տարիներին հանդես եկավ հոդվածներով եւ բանաստեղծություններով, որտեղ ձգտում էր ոչ միայն հայրենասիրություն եւ արիություն արթնացնել ժողովրդի մեջ, այլեւ վերականգնել ազգային-հոգեւոր ոգին՝ հանձին Հայ Առաքելական Եկեղեցու: Հատկապես այն դրսեւորվել է Ս. Էջմիածնի պատմական դերի վերաբերյալ նրա հոդվածում, որտեղ նշվում է. «Էջմիածինը Հորից է: Եւ փառքի լույսը նրա հետ է», «Միշտ անշարժ պահիր Աթոռն հայկազնեա»[7]:

Պետք է ասել, որ ոչ միայն հայ մտավորականները հաճախ բացահայտորեն պաշտպանում էին եկեղեցին, այլեւ արտասահմանյան հայ հարուստները ձգտում էին իրենց միջոցներով օգնել Մայր Տաճարի վերանորոգման գործին: Դեռեւս Երկրորդ աշխարհամարտից առաջ՝ 1930-ական թթ., ազգային բարերար Գալուստ Գյուլպենկյանը իր օգնությունը առաջարկեց խորհրդային հայ ղեկավարներին՝ Աղասի Խանջյանին, Լեւոն Կարախանին եւ ուրիշների, որոնք, սակայն, այդ դեպքի առիթով որակավորվեցին որպես խորհրդային երկրի թշնամիներ եւ մեջտեղից վերացվեցին[8]: Թվում էր, թե իշխանությունները բանական եզրակացություն չէին ուզում անել, որ միայն կաթողիկոսական ընտրությունը թույլատրելը դեռեւս բավական չէր, մանավանդ, որ այն իրականացվեց 7 տարվա ձգձգումով: Սկսյալ 1938 թ.՝ Խորեն Ա. Կաթողիկոսի մահվանից, անընդհատ այդ հարցը քննարկվում եւ հետաձգվում էր: Մինչդեռ ըստ 1925 թ. կանոնադրության՝ նախորդ Կաթողիկոսի մահվանից 6 ամիս անց պետք է կազմակերպվեին նոր Կաթողիկոսի ընտրություններ: 1940 թ. տեղապահ Գէորգ արքեպ. Չորեքչյանը զգուշավոր կերպով ուզում էր հրավիրել Ազգային-եկեղեցական ժողով, սակայն երկյուղում էր, որ այն կընթանա 1932 թ. ժողովի նման, երբ դրսից շատ հեղինակավոր հոգեւորականներ չկարողացան գալ Ս. Էջմիածին: Այդ երկյուղը տեղին էր, եւ 1941 թ. ապրիլի 10-13-ը տեւած ժողովից հետո հատուկ հեռագիր ուղարկվեց Երուսաղեմի պատրիարքին՝ հետեւյալ ձեւակերպմամբ. «Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութիւնը յետաձգուած է պատեհ ժամանակին»[9]: Ժողովին չկարողացան շատ պատգամավորներ գալ Հայրենական մեծ

5 Տե՛ս «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Զ., էջ 132:

6 **Զաւեն աւագ քհնյ. Արզումանեան,** Ազգապատում, էջ 153:

7 «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Զ., էջ 212:

8 **Սրբ. Սրեւիանյանց,** Հայ Առաքելական Եկեղեցին սպալինյան բռնապետության օրոք, Երեւան, 1994, էջ 202:

9 **Զաւեն աւ. քհնյ. Արզումանեան,** Ազգապատում, էջ 172:

պատերազմի պատճառով: 1945 թ. արդեն ժամանակն այլ էր, եւ խորհրդային կառավարությունը Մայր Աթոռի նկատմամբ լիբերալ դրամադրվեց՝ պատերազմի ժամանակ նրա ցուցաբերած բարոյական եւ նյութական օժանդակության համար, եւ նույնիսկ 1945 թ. ապրիլի 19-ին Ազգընտիր տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսը հյուրընկալության արժանացավ ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ի. Վ. Ստալինի մոտ[10]: Պատմական այդ բացառիկ իրադարձությունն իրականացավ Գէորգ արքեպ. Չորեքչյանի դիվանագիտական ձիրքի եւ ձեռք բերած մեծ հեղինակության շնորհիվ, որ դրսեւորվեց պատերազմի ժամանակ: Հանդիպման ժամանակ Գէորգ արքեպիսկոպոսը ներկայացրել է Հայ Եկեղեցու վերաբերյալ մի շարք հարցեր: Ընդհանուր առմամբ պահանջները շարադրված են 11 կետով, որի վրա Ի. Ստալինը ձախ անկյան վերեւում մակագրում է. «Համաձայն եմ»[11]: Այդ կետերից գրեթե բոլորը կատարվեցին՝ բացի վանքապատկան հողերը վերադարձնելուց, որոնք տրված էին կոլտնտեսությունների օգտագործմանը: Այդ պատմական հանդիպմանը Ի. Ստալինը թույլատրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրավիրել Ազգային-եկեղեցական ժողով, որն իրականացավ 1945 թ. մայիսի 20-ին, երբ ձայների բացարձակ մեծամասնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Գէորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը:

Սակայն դրանից հետո էլ Հայ Առաքելական Եկեղեցու վիճակը չբարելավվեց: Սահմանափակելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավունքները՝ խորհրդային իշխանությունները հնարավորություն տվեցին հակաբոլշեւիկյան ուժերին՝ արտասահմանում ծավալելու լայն աշխատանք, նսեմացնելու Ս. Էջմիածնի դերը, խլելու նրա արտասահմանյան թեմերը եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հակադրելու նրան: Բայց այդ բանսարկություններին տուրք չտվեց Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա. Կաթողիկոսը եւ, ինչպես 1945 թ. եկեղեցական ժողովի ժամանակ, անձնվիրաբար պաշտպան կանգնեց Գէորգ կաթողիկոսին, այս պարագայում եւս պահպանեց իր բարեկամությունը Մայր Աթոռի հետ՝ դարձյալ իրեն համարելով Ս. Էջմիածնի միաբան:

Իշխանությունները միջամտում էին կրոնական խորհրդի կառավարման գործերին, խանգարում եկեղեցու գործառմանը, օրինակ՝ մյուռոնօրհնեքի արարողությանը: Այսպես, 1947 թ. պետք է կատարվեր այդ արարողությունը, բայց եկեղեցական գործերի խորհուրդը, փաստորեն, ձախողեց, եւ ստիպված էին այն հետաձգել 1948 թ., սակայն դարձյալ հետաձգվեց: Այդ հանգամանքը վրդովեցրեց Կաթողիկոսին, եւ նա մի գրությամբ ներկայացրեց իր անելանելի եւ ծանր կացությունը[12]:

1947 թ. եկեղեցական գործերի խորհրդի որոշմամբ Մայր Աթոռին հրահանգվեց՝

ա) թույլ չտալ Կաթողիկոսին մասնակցել համաշխարհային հայկական համագումարներին,

---

10 «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Զ., էջ 256: Տե՛ս նաեւ ՀՀ ԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 739, թ. 17, 18, 19:

11 Տե՛ս անդ, էջ 258:

12 Տե՛ս **Սպ. Սպեփանյանց,** Հայ Առաքելական Եկեղեցին սովետական բռնապետության օրոք, էջ 208:

բ) չթողնել Կաթողիկոսին նամակներ ուղարկել Անգլիայի Քենթրբերիի արքեպիսկոպոսին,

գ) ձգձգել վանական շենքերի լրիվ հանձնումը եկեղեցուն եւ գործադրել եկեղեցիների վերացման պետական որոշումը:

Խորհրդային իշխանությունը 1953 թ.ից ի վեր մի փոքր մեղմությամբ շարունակեց նույն քաղաքականությունը: Սակայն հավատացյալ հայ ժողովուրդը շարունակում էր ուխտագնացությունը դեպի քանդված եկեղեցիներն ու մատուռները՝ աղոթելու, բուժվելու եւ հոգեկան պահանջմունքները բավարարելու:

Անընդհատ հայ հավատացյալները դիմումներ էին հղում Ազգընտիր Կաթողիկոսին եւ խնդրում վերաբանալ «պատմական հուշարձաններ» համարվող եկեղեցիները: Գոնե պատմական հուշարձանների անվան տակ հետագայում Պետական շինարարության կոմիտեն կազմեց նորոգման եւ բարեկարգման հնգամյա պլան, որում ընդգրկվեցին Գոշավանքի, Երերույքի, Խորակերտի, Ամբերդի վանական համալիրները[13]: Դեռեւս 1948 թ. նամակներ ստացվեցին՝ բանալու Կալինինոյի (ներկայումս՝ Տաշիր) շրջանի Շահնազար գյուղի Ս. Հովհաննես Մկրտիչ, Ապարանի Ս. Նշան, Վերին Թալինի Ս. Աստվածածին, Ակունք գյուղի եւ մի քանի այլ բնակավայրերի եկեղեցիները[14]: Բնական է, որ այս կարգի նամակները ուղարկվում էին Հայ Եկեղեցու գործերի խորհրդին, ուր դրանք երբեմն «կորչում» էին, մնում անպատասխան: Այնուամենայնիվ, խնդրագրերը գալիս էին ու գալիս, սակայն զանազան տիպի խոչընդոտներ էին առաջանում, եւ հիմնականում Ամենայն Հայոց Կաթողիկոսին թույլատրվում էր իրագործել միմիայն պետության պահանջին համապատասխանող քաղաքականություն:

1954 թ. մայիսի 9-ին ծերունազարդ Գէորգ Զ. Չորեքչյան Կաթողիկոսը վախճանվեց՝ շատ ծրագրեր թողնելով անավարտ:

Հայոց եկեղեցու կրթամշակութային ձեռնարկումները. «Էջմիածին» ամսագրի հիմնադրումը. Խորհրդային իշխանությունը, ինչպես տեսանք, չճանաչեց Հայոց ազգային եկեղեցին: Մինչդեռ իրենից առաջ երկու տարի գոյություն ունեցած Հայաստանի Առաջին Հանրապետությունը ճիշտ գնահատեց Հայ Եկեղեցու նշանակությունը եւ հարգանքով վերաբերվեց թե՛ Եկեղեցուն, թե՛ նրա հոգեւոր առաջնորդին: Հարգանքով է ընթերցվում՝ Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու եւ Հայաստանի Հանրապետության միջեւ կնքվելիք (թեկուզեւ չիրականացված՝ պատմական անհապաղ պայմանների պատճառով) դաշնագրի նախագիծը, որտեղ ընդգրկվում են՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախամեծար եւ գերիշխան իրաւունքները ազգային-եկեղեցական եւ կրօնաբարոյական խնդիրներում»[15]: Փաստաթղթում նաեւ ասվում է, որ «Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ որպէս իր անսահման իշխանութեան վայրում՝ բաց է անում ամէն տիպի դպրոցներ, հասարակական ու կրօնաբարոյական հիմնարկութիւններ, առանց որեւէ սահմանափակումների, իսկ Հայաստանի Հանրապետութեան սահմաններում՝ համաձայն գոյութիւն ունեցող ընդհա-

13 Տե՛ս «Էջմիածին», 1965, մայիս-հունիս-հուլիս, էջ 203-206:

14 Տե՛ս անդ, էջ 208:

15 «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Ե., Երեւան, 1999, էջ 514:

նուր դրութեան»[16]: Այսպիսով, Հայ Եկեղեցու առջեւ դրանով, ինչպես 1700 տարի առաջ, լայն ասպարեզ էր բացվում մշակութային-լուսավորական գործունեության համար:

Խորհրդային տարիների սկզբում ընդհանրապես արգելվեց տպագրել պաշտոնաթերթ-ամսագիր, որը Գէորգ արքեպ. Չորեքչյանի հմուտ քաղաքականության շնորհիվ միայն 1944 թ. հունվարին պաշտոնապես թույլատրվեց հրատարակել՝ «Էջմիածին» խորագրով: Գէորգ Զ. Կաթողիկոսի անվան եւ գործունեության հետ են կապված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեր օրերի հոգեւոր, վանական-վարչական, կրթական-կազմակերպչական պատասխանատու աշխատանքների սկզբնավորությունը, այդ թվում՝ պաշտոնաթերթի հրատարակությունը՝ չնայած այն գործում էր խիստ գրաքննության պայմաններում: Եկեղեցու ամեն մի թղթակցություն արտասահմանի հետ ենթարկվում էր մանրակրկիտ ստուգման: Այսպես, պահպանված մի փաստաթղթում պարզորոշ գրված է. «Նմանապես անհրաժեշտ է հայտնել, որ նրանց (եկեղեցու) գրագրությունները արտասահմանի հետ պետք է կատարվի Ձեր գիտությամբ: Կառավարությանը իրազեկ պահելու համար, որպեսզի ապագայում այդպիսի ծրարները բացման եւ գրաքննության չենթարկվեն»[17]: Այսպիսով, գրությունները գրաքննվել են հատուկ նշանակված մարդու՝ Գր. Վարդանյանի միջոցով, որպեսզի հարկ չլինի հետագայում բացել ծրարները: Անդրադառնալով ամսագրի տեղին ու նշանակությանը՝ Գէորգ Զ.-ն ազգային բարերար Գալուստ Գյուլպենկյանին գրած նամակում նշում է. «Ամսագիրը արձանագրում է, թե հայրենի երկրի եւ թե Խորհրդային Միության մեջ տեղի ունեցող բոլոր երեւույթները: Արձագանքում եւ լուսաբանում է սփյուռքի հայության ընդհանուր կյանքի երեւույթները»[18]: Դրանում նաեւ նշում է «Էջմիածին» ամսագրի եկեղեցական, մշակութային, բնաշխարհի, սփյուռքահայության եւ ընդհանրապես քույր եկեղեցիների եկեղեցական կյանքի կարեւոր երեւույթների նկարագիրն ու լուսաբանությունը: Ամսագրի էջերում տեղ են գտնում այնպիսի հոդվածներ, որոնք լուսաբանում են Հայ երկրի, Խորհրդային Միության ու եւրոպական գրականության կարեւորագույն խնդիրները՝ տալով գրական դեմքերի գնահատականները: Ամսագիրը պարբերաբար հրատարակում է մատենագրական նորույթներ:

Ամսագրում նաեւ տեղ էին գտնում համաշխարհային նշանակություն ունեցող խնդիրներին վերաբերող հարցեր, ինչպիսիք էին խաղաղության եւ ազգերի ու պետությունների համագործակցության ու եղբայրության հարցերը: Ամսագրի գոյությունը անհրաժեշտություն էր եւ ժամանակի պահանջ. «Այսպիսի թերթի գոյության անհրաժեշտությունը, ընդհանուր առմամբ եւ մանավանդ Սփյուռքի հայության համար ինքնին հասկանալի է, որի ապացույցը երկրի եւ Սփյուռքի հայության դրական վերաբերմունքն է»[19]: Այդ ժամանակ համաշխարհային կյանքի կարեւորագույն երեւույթը Հայրենական մեծ պատերազմն էր, եւ ամսագիրն իր վերաբերմունքը դրսեւորեց աշխարհակործան այդ պատերազմի նկատմամբ: Պատերազմի տարիներին Հայ եկեղեցին կատարեց իր պատ-

16 Անդ, էջ 515:
17 ՀՀ ԱԱ, ֆ. 113, ց. 43, գ. 30, թ. 1:
18 «Էջմիածին», Մատենագիտություն, կազմող՝Ս. Կոծինյան Ս. Էջմիածին, 1975, էջ 3:
19 Անդ, էջ 3:

մական դերը, եւ ամսագրի էջերում լուսաբանվում էին պատերազմի էությունը եւ պատերազմում ԽՍՀՄ-ի հաղթանակի նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, ժողովուրդ, որ լավ գիտեր, թե ինչ է պատերազմը եւ ինչքան թանկ նստեց իր վրա Առաջին աշխարհամարտը: Այս ոգով է, որ Հայ Եկեղեցու ազգընտիր տեղակալը ամսագրի անդրանիկ համարում գրում է. «Հայ եկեղեցին օրհնել է հայ ժողովրդի հերոսական դիմակայության ոգին, ներշնչել է ազգային անկախության գաղափարը, մշակել է ազգային ինքնագիտակցության զգացումը եւ Խաչն ու Ավետարանը ձեռքին, քաջալերելով հայ զորքը, դեպի հաղթություն առաջնորդել նրան»[20]: Այդպես հայ ժողովուրդը իր հերոսներով իջավ Ավարայրի դաշտը եւ մաքառեց «վասն հայրենեաց եւ վասն հաւատոյ», այդպես մաքառեց եւ հաղթեց Ի. դարում՝ Սարդարապատի հերոսամարտում՝ Խաչի եւ Ավետարանի օրհնությամբ: Հայրենասիրության բազում կոչեր են տպագրվում ամսագրի համարներում՝ ազգասիրական զգացմունքներ արթնացնելով ընթերցող հասարակության մեջ, բացատրելով. «Հայը, բացի Խորհրդային Հայաստանից չունի այլ հայրենիք: Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կռվան, բայց եթե Հայ Եկեղեցին եւ նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝ Ս. Էջմիածնի Հայրապետական աթոռով»[21]:

Ամսագիրը մանրամասն անդրադառնում է 1945 թ. հունիսի 16-ի կաթողիկոսական ընտրությունների ընթացքին: Հետագայում տպագրվեցին Գէորգ Զ. Կաթողիկոսի կոնդակները, քարոզներն ու ճառերը, որոնք մեր ժամանակի եկեղեցական մատենագրության փայլուն էջերից են: Ամսագիրն իր էջերում տպագրեց Հայրապետական կոնդակներ՝ նվիրված Հայրապետական Աթոռը Սսից Ս. Էջմիածին վերահաստատելու 500-ամյակին, Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակին, որոնցում միաժամանակ լուսաբանված են մեր ազգային-եկեղեցական կյանքի մեծ իրադարձությունները, ժամանակակից հարցերը:

1946 թ. սկսվեց սփյուռքահայերի հայրենադարձությունը: Ամսագիրն անդրադառնում է նաեւ հայրենիք վերադարձածների խնդիրներին, պատմում կյանքի բոլոր ասպարեզներում նրանց հարմարվածության մասին: Ամսագիրը սպասված միակ պարբերականն էր, որ կապ էր ստեղծում Հայրենիքի եւ Սփյուռքի միջեւ, թեկուզ զգույշ, դժվարություններով, բայց կապը ստեղծվեց: Էջմիածնից Ամենայն Հայոց Հայրապետը դեպի Սփյուռք հղեց «Դեպի երկիր, դեպի երկիր, ամեն ինչ ներգաղթի համար» կոչը, այդ գործի իրականացման մեջ ներգրավեցին նաեւ դրսի թեմերի առաջնորդները, ազգային մարմինները: Այսպիսով, Մեծ Եղեռնից հետո աշխարհասփյուռ հայերը նորից իրենց զգացին որպես հայ, որ ունեն Հայրենիք, որը կարոտ է իր զավակներին: «Էջմիածին» ամսագիրը, առաջնորդված Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի գերագույն շահերով, խաղաղության պաշտպանության հարցը համարել է իր սրտին մոտ խնդիր, եւ իր էջերը, 1949 թվականից սկսած, լայնորեն տրամադրել այդ մարդասիրական, կենսական հարցի պաշտպանությանը: Ամսագրի խմբագրականներից մեկը հայտարարում էր. «Հայաստանյայց

20 «Էջմիածին», 1944, թ. Ա., էջ 1-3:
21 «Էջմիածին», 1944, թ. Է-Թ., էջ 3-4:

Եկեղեցին՝ հավատարիմ իր ավանդական սկզբունքներին, իր ձայնն է բարձրանում խաղաղության օգտին»[22]:

«Էջմիածին» ամսագիրը, լինելով «Արարատ»-ի ավանդույթների ժառանգորդն ու շարունակողը, իր էջերում բացի կրոնական, եկեղեցագիտական, քարոզագրական, բարոյագիտական թեմաներից, հրատարակել է նաև հայագիտության, եկեղեցական արվեստին եւ պատմությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ: Ամսագիրը աչքի էր ընկնում ձեւավորման բարձր կուլտուրայով եւ արվեստով: Նրա ձեւավորումը տարբեր տարիների վստահվել է տաղանդաշատ նկարիչների՝ Տարագրոս Տեր-Վարդանյանին եւ Հակոբ Կոջոյանին:

Ամսագիրը մշտապես բարձր մակարդակով արձագանքել է համազգային հոբելյանների պատմական օրերին: Իրենց հերթին ամսագրին աշխատակցել են, բացի Մայր Աթոռի միաբաններից, նաեւ Սփյուռքի բարձրաստիճան հոգեւորականներ ու հայ մշակույթի վաստակավորներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ ու հոգեւոր ճեմարանի դասախոսներ: Ամսագրի դերի ու հեղինակության բարձրացմանը նպաստում էր նաեւ Մատենադարանի, ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի եւ այլ հայագիտական հաստատությունների համագործակցությունը:

Հիմնադրման օրից «Էջմիածին» ամսագրին աշխատակցել են Գէորգ Զ. Հայրապետը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա. Հովսեփյանը, Ստեփանոս Մալխասյանը, Հրաչյա Աճառյանը եւ անվանի շատ գիտնականներ ու ազգային մշակույթի մեծ ջատագովներ: Սփյուռքից աշխատակցել են Արտավազդ արքեպ. Սուրմեյանը, Նորայր եպս. Ծովականը (Պողարյան), Արշակ Ալպոյաճյանը, Արամ Երեմյանը եւ շատ ուրիշներ[23]: Տպագրելով ձեռագրագիտության, աղբյուրագիտության, հնագրության, հայ արվեստի, տոմարագիտության, հայ ժողովրդի եւ գաղթավայրերի պատմության խնդիրներին նվիրված հոդվածներ՝ ամսագիրը մեծապես նպաստել է հայագիտության զարգացմանը:

Ամսագրի էջերում հաճախակի են տպագրվում միջնադարյան անտիպ բնագրեր, ինչպես օրինակ՝ Մխիթար Գոշի, Հովհաննես վանական Տավուշեցու, Պողոս Տարոնեցու եւ այլոց գործերը: Հայագիտության սեփականությունն են դառնում Դավիթ Ալավկա որդու կանոնները, Հովհաննես Սարկավագի կենսագրության եւ մատենագրության վերաբերյալ նյութեր, Հրաչյա Աճառյանի «Հայ տառերի գյուտի ստույգ թվականը» եւ շատ այլ աշխատություններ: Տպագրվում են նաեւ բազմաթիվ արխիվային նյութեր՝ Մանվել վրդ. Կյումիշխանեցու, Խ. Աբովյանի, Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Շահազիզի, ծովանկարիչ Հովի. Այվազովսկու, Խրիմյան Հայրիկի, Թ. Թորամանյանի եւ այլոց մասին: Ուշադրությունից դուրս չեն մնացել նաեւ առանձին վանական կառույցները եւ եկեղեցիները, նրանց նվիրվել են հատուկ հետազոտություններ, հոդվածներ: Դրանցից են Տիրայր վրդ. Մարտիկյանի հոդվածները Ամարասի, Շուշիի եւ Գանձասարի մասին: Չի մոռացվում ամսագրի էջերում նաեւ Հայ Եկեղեցու նշանավոր երախտավորների կյանքի պատմութ-

22 Տե՛ս «Էջմիածին», Մատենագիտություն, էջ 5:
23 Տե՛ս անդ, էջ 3:

յունը (օրինակ՝ Մաղաքիա արքեպ. Օրմանյան եւ Եղիշե արքեպ. Դուրյան): Սփյուռքահայ գործիչ Հ. Սիրունին ամսագրի էջերում հրապարակում է «Պոլիս եւ իր դերը» աշխատությունը, որտեղ ցույց է տալիս հայկական սփյուռքի մի հատվածի դերն ու նշանակությունը: Այդպես, լույս են տեսնում հայկական գրեթե բոլոր գաղթօջախների մասին մանրակրկիտ աշխատություններ: Հետաքրքիր նյութեր են տպագրվում՝ նվիրված նաեւ Հովսեփ արքեպ. Արղությանի հայրենանվեր գործունեությանը եւ նրա՝ ԺԸ. դարում Ռուսաստանում ծավալած տպարանային գործունեությանը: Գնալով ավելանում է ամսագրի աշխատակազմը եւ նրա գործունեության շրջանակը՝ ընդգրկելով ձեռագրերի կազմի, հայ դպրոցի, տպագրության եւ հայ մամուլի պատմության, Աստվածաշնչի հայերեն բնագրի եւ այլ տիպի հրապարակումների ոլորտը:

Ամսագրում հաճախ տպագրվում են փրկված կամ ոչնչացած ձեռագրերի պատմությունները, ուսումնասիրվում են Լիմ անապատի, Կտուցի, Արտեր կղզու, Սանահնի, Հաղպատի, Մոկաց աշխարհի Ս. Կարապետի եւ այլ վանքերի ձեռագրերը, որպես գրչության կենտրոնների՝ տրվում է դրանց գնահատականը: Հանդեսում թարգմանաբար ընդգրկվում են նաեւ այլ լեզուներով գրված, սակայն հայ մատենագրության հետ սերտորեն առնչվող գործեր. լույս են տեսնում Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ մի խմբագրությունը, նրա նորահայտ արաբերեն խմբագրությունը (Հր. Բարթիկյան եւ Ա. Տեր-Ղեւոնդյան), ասորերենից թարգմանաբար ներկայացվում է «Հայ Թովմասի վարքը» (Հ. Մելքոնյան)[24]:

Պարբերաբար լույս են տեսնում հոդվածներ Հայոց պատմության մասին, ի մասնավորի՝ Հակոբ Մանանդյանի «Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության» գործը: Նշվում են Հայ Եկեղեցու եւ այլ դավանանքի անցած հայերի, նշանավոր հայ գործիչների մասին:

Նյութեր են տպագրվել նաեւ Մայր Տաճարի պեղումների մասին, որ կատարել է ճարտարապետ Ա. Սահինյանը: Լուսաբանվել է հայ դպրոցի պատմությունը՝ բնականաբար ուրույն տեղ հատկացնելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանին: Հոդվածներ է գրել Հովսեփ Եղիազարյանը Հաղարծնի, Գեչառիսի, Մարմարաշենի, Հառիճի, Սանահնի, Սաղմոսավանքի, Հավուց թառի եւ այլ վանքերի մասին: Երբ լրացավ Էջմիածնի տպարանի հիմնադրման 200-ամյակը, հատուկ համար լույս ընծայվեց այդ նշանավոր հոբելյանին, որտեղ տպագրվեց Արտակ եպս. Սմբատյանցի «Ս. Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը եւ Մայր Աթոռի տպարանը» աշխատությունը: Իսկ երբ 1968 թ. նշվում էր «Արարատ»-ի 100-ամյակը, դրան եւս նվիրվեց հատուկ համար «Էջմիածին» ամսագրում՝ տալով «Արարատ»-ի եւ «Էջմիածին»-ի մատենագիտությունները, որոնք կարեւոր նշանակություն ունեն հայագիտությամբ զբաղվողների համար: Ամսագրում նաեւ լույս են տեսել հայ եւ օտարազգի հայագետների մասին հոդվածներ եւ նրանց աշխատությունների մատենագիտությունները:

Լեզվաբանության հարցերը նույնպես պատշաճ ուշադրության են արժանացել

24 Տե՛ս անդ, էջ 10:

(ակադեմիկոսներ Ստ. Մալխասյան, Հր. Աճառյան եւ ուրիշներ): Հանդեսի էջերում տեղ են գտել հոգեւոր եւ ժողովրդական շատ երգերի ուսումնասիրություններ, որտեղ հատկապես նշվում է Կոմիտաս վարդապետի դերը նրանց հավաքման, ուսումնասիրման, տպագրման եւ ժողովրդայնացման մեջ:

Ամսագիրը, ունենալով այսքան արժանիքներ ու նշանակություն, գոյատեւում էր դժվարին պայմաններում. յուրաքանչյուր հոդված մանրակրկիտ կերպով գնվում եւ վերլուծվում էր համապատասխան օրգանների կողմից:

«Էջմիածին» ամսագիրը միշտ ԽՍՀՄ նախարարների խորհրդին կից Կրոնական գործերի խորհրդի նախագահի ուշադրության կենտրոնում էր: Նա, անհանգստացած ամսագրի հաջողությունից, 1950 թ. սեպտեմբերին գրում է ՀԽՍՀ նախարարների խորհրդին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Գրիգորյանին, որ շատ մարդիկ դիմում են իրեն՝ ամսագրի հակահորհրդային ուղղվածության համար, որ ամսագրի հոդվածագիրները շատ հարցերում կիսում են դաշնակցականների գաղափարները, թույլ են տալիս քաղաքական սխալներ, աղավաղում փաստերը: Պոլյանսկին նույնիսկ գրում է. «Անհայտ հեղինակը հայտարարում է (ամսագրի 1949 թ. մայիս-դեկտեմբեր համարում), որ համարյա ամբողջ բովանդակությունը հետապնդում է մի նպատակ՝ ցույց տալ, իբրեւ Էջմիածնի Կաթողիկոսության պաշտոնական մամուլը՝ «Էջմիածինը» դրսում փոխել է իր կողմնորոշումը (օրիենտացիան) եւ այժմ մեծ մասամբ կիսում է դաշնակցականների կարծիքները»[25]: Այնուհետեւ նա անձամբ Գրիգորյանից պահանջում է իրազեկ լինել եւ պատասխանել իր հարցադրումներին: Այդ ժամանակ նա մեղադրում է նաեւ այն բանում, որ ամսագիրը ըստ արժանվույն չի նշել ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի ծննդյան 150 եւ Ի. Վ. Ստալինի ծննդյան 70-ամյակները: Ստանալով նման հակիրճ եւ խիստ տոնով գրված նամակ՝ Գրիգորյանը լծվում է իր «հետախուզական» աշխատանքին: Պատասխան նամակում հայ պաշտոնյան գրում է, որ ինքը մանրակրկիտ հետեւում է ոչ միայն «Էջմիածին» ամսագրի գործունեությանը, այլեւ արտասահմանյան հայ մամուլին՝ հայտնելով, որ այն պահվում է արտասահմանյան հայերի միջոցներով, չնայած սահմանափակ, բայց տարածվում է Խորհրդային Հայաստանի հավատացյալների մեջ եւս, ինչպես նաեւ եղբայրական այլ հանրապետություններում: Հատկապես իշխանություններին դուր չէր գալիս ամսագրի հայագիտական ուղղվածությունը, որ ըստ նրանց՝ «Չի կարելի լռության մատնել»[26]: Տագնապի փող հնչեցնելով՝ Գրիգորյանը անձամբ է լինում ամսագրի խմբագրի՝ պրոֆ. Աշոտ Աբրահամյանի մոտ՝ իմանալու, թե ինչու է կտրուկ փոխվել ամսագրի բնույթը, դարձել հակահորհրդային: Դա արդեն այն ժամանակվա համար դատապարտվածության նման մի բան էր: Բայց, շնորհիվ աշխատակիցների դիվանագիտական ստույգ պատասխանների, բացի քննադատությունից, ոչինչ չկարողացան անել, եւ ամսագիրը շարունակեց իր գործունեությունը: Քննադատողներին զայրացնում էին նույնիսկ հրապարակվող նյութերի վերնագրերը, օրինակ՝ «Մայր Աթոռ եւ Մայր Հայրենիք», որովհետեւ դրա մեջ մտովի մտնում էր Խորհրդային Հայաստանից

25 ՀՀ ԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 18, թ. 1:
26 Անդ, թ. 2:

դուրս գտնվող հայությունը, որով Մայր Աթոռի իշխանությունը մեծանում եւ տարածվում էր ամենուրեք: Եւ եթե «Մայր Աթոռ» ասելով նկատի է առնվում նաեւ Կիլիկյան կաթողիկոսությունը, ապա «Մայր Հայրենիքն» ակնարկ չէ՞ այն մասին, որ գոյություն ունի մեկ այլ Հայրենիք, ասենք թե՝ Արեւմտյան դատարկված Հայաստանը[27]: Նույնիսկ բուռն քննադատության էին ենթարկվում Սփյուռքի մասին հաճախակի տպագրվող նյութերը՝ հաճախ մեղադրվելով աշխարհաքաղաքացիականության (կոսմոպոլիտիզմի) մեջ: Նույնիսկ ամսագրի համարներից մեկի առաջնորդող հոդվածը, որ կարելի է համարել ոչ միայն Մայր Աթոռի, այլեւ ամբողջ հայության հարգանքի տուրքը նոր կարգերին եւ պետությանը, դա նույնպես որակավորվում է իբրեւ «հակահոռիդային բամբասանք» եւ «սրոր նենգափոխում»: Բերենք դրանից մի հատված. «Մայր Աթոռը իր հավատարմությունը Մայր Հայրենիքին ավելի վառ կերպով ցուցադրել է հատկապես Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Ղեկավարվելով Հայ Եկեղեցու դարավոր ավանդույթներով՝ իր հավատացյալներին կոչ է արել ոտքի կանգնել, ինչպես մի մարդ, պաշտպանելու իր սրբազան հայրենիքը»[28]: Հոդվածի մեջ նաեւ հիշատակված է արտասահմանյան հայերի օգնությամբ «Սասունցի Դավիթ» տանկային 2 շարասյուների ստեղծումը եւ այլն: Սակայն այս անկեղծ հավատարմության արտահայտությունը ծաղրվում է անգթաբար եւ ընդունվում որպես կեղծավորություն: Զայրացած Գրիգորյանը իր զեկուցագրում հայտնում է, որ այդ փոքրիկ հոդվածում հիշատակված են 11 անգամ «Հայրենիք» եւ 8 անգամ «Մայր Հայրենիք» արտահայտությունները, մինչդեռ պարտավոր էր գրել «Մայր Հայրենիք»-ի փոխարեն «Խորհրդային Հայաստան» կամ «Խորհրդային Հայրենիք»[29]: Հոդվածում եղել է նաեւ մի ակնարկ, որ շատ թշնամիներ պատրաստ են արշավելու Մայր Հայրենիքի դեմ: Այստեղ էլ կուսակցության զգոն աշխատակիցը եզրակացնում է, որ կարծես Մայր Հայրենիքը չի համարվում Խորհրդային Միության անբաժանելի մասնիկը եւ ունի իր համար հատուկ թշնամի: Այսպիսի անհեթեթ դիտողություններ տեղ են գտել նաեւ մյուս համարների հոդվածների համար:

Թղթակից Արմեն Արամյանի հոդվածը, որ վերնագրված էր «Մի քանի ժամ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանում», որակեցին որպես «հակասովետական բնույթի» գրություն, որ «միաժամանակ վարկաբեկում է խորհրդային գիտնականի բարձր կոչումը եւ թերագնահատում է խորհրդային դպրոցը»[30]:

Հանդեսն առանձին բաժին ստեղծեց «Հայագիտական» վերտառությամբ: Դա արդեն խիստ զայրացրեց քննադատներին, այդ թվում՝ Գրիգորյանին: Այն մեկնաբանվեց այսպես. իբրեւ հայագիտությամբ կարող են զբաղվել միայն Գարեգին Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը եւ արտասահմանի հայերը: Հետաքրքիր է, որ Կարո Ղաֆադարյանի «Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները»[31] նշանավոր աշխատությունը գրվել է 1948 թ. եւ վերոհիշյալ խորագրի տակ լույս տեսել 1950 թ.: Սա որակվեց որպես

27 Անդ, թ. 3:
28 Անդ, թ. 3-4:
29 Անդ, թ. 4:
30 Անդ, թ. 20:
31 Տե՛ս անդ, թ. 28:

խորհրդային հայագիտության նկատմամբ բացասական կարծիք, որ 1948-1950 թթ. որեւէ առաջընթաց այդ բնագավառում չի եղել: Նույնիսկ այն դեպքում, երբ ամսագիրը ձգտում էր սփյուռքահայությանը ցույց տալ Մայր Հայրենիքի տեխնիկական առաջընթացը, օրինակ՝ «Ռադիոֆիկացիան Երեւանում», դիտվեց դիտավորություն՝ ասելով, որ նոր չի ռադիոֆիկացվում[32]: Բանն այնտեղ հասավ, որ Մոսկվան Մայր Աթոռից պահանջեց 1944-1958 թթ. լույս տեսած «Էջմիածին» ամսագրի բոլոր համարների ռուսերեն թարգմանված օրինակները՝ մեկնաբանություններով, ինչից հետո ՀԽՍՀ նախարարների խորհրդին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանը կատարում է նշված կարգադրությունը՝ Ի. Վ. Պոլյանսկուն գրած հատուկ նամակին կից օրինակները ուղարկելով[33]:

Ամսագիրն անընդհատ թիրախ էր դառնում խորհրդային պաշտոնեության հարձակումների համար, մինչդեռ ընթերցողները հարգանքով եւ սիրով էին վերաբերվում դեպի Մայր Աթոռի ամսագիրը: Նույն հարգանքը նա վայելում էր Սփյուռքում, որտեղ ամսագիրը դիտվում էր՝ որպես հայրենասիրության մի փոքր ակունք, նեցուկ՝ հայապահպանման համար: Պարբերաբար լույս տեսնող համարներում սփյուռքահայերը ծանոթանում էին Հայրենիքի նվաճումներին, եւ Մայր Աթոռի գործունեությանը: 1950 թ. ամերիկյան «Պայքար» օրաթերթում թղթակից Վ. Ս. Մալիասյանը գրում է «Էջմիածին» ամսագրի նշանակության մասին. «Ցաւալի է, որ ամերիկահայութեան մեծագոյն մասը տեղեկութիւն չունի խանդավառ իրականութենէն, որ Հայրապետական Աթոռը յոթ տարիներէ ի վեր կանոնաւորաբար լոյս կընծայէ իր պաշտօնաթերթը, «Էջմիածին» ամսագիրը: Այս պաշտօնական ամսագրին ընթերցողներուն թիւը մատների վրայ կարելի է համրել»[34]: Այնուհետեւ ցավ է հայտնում, որ ամերիկահայությունը համեմատաբար ավելի լավ է ապրում, բայց շատ հայեր կապված չեն Մայր Հայրենիքի հետ, եւ ափսոսանքով գրում է. «Քիչ մը հայրենասիրութեան կայծ բոլոր հայերու սրտին ու հոգիին մէջ՝ եւ բնական է, որ մեր ազգային եկեղեցական, կուսակցական ու կազմակերպական կեանքը բոլորովին տարբեր պիտի ըլլար»[35]: Եւ շարունակում է, որ շատ ամերիկահայեր հայերեն թերթ եւ գիրք չեն ընթերցում, եւ եթե ուզեն, ոչ միայն կբաժանորդագրվեն «Էջմիածին», այլ դյուրությամբ կարող են նույնիսկ հանգանակության միջոցով գրքասերներին եւ մտավորականներին հասցնել նրա համարները եւ բացել հայկական դպրոցներ ու ազգային հաստատություններ: Ամսագրի 1950 թ. մարտ-ապրիլ համարը լույս է տեսնում Ստոկհոլմում կայացած խաղաղության կողմնակիցների համագումարի ժամանակ: Հատուկ հոդվածով «Էջմիածին»-ը հղում է համագումարին իր ողջույնը՝ դրանով արտահայտելով ոչ միայն ամսագրի, այլեւ ողջ հայության ջերմ վերաբերմունքը խաղաղության պահպանման հանդեպ: Խաղաղությունը հայ ժողովրդի դարերի երազն էր, եւ լինելով՝ մեր հայրապետները միշտ էլ իրենց օրհնությունները տվել են խաղաղության ջատագովնե-

32 Տե՛ս անդ, թ. 29:
33 Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 823, ց.1, գ.27, թ.1:
34 «Պայքար» օրաթերթ, Բոստոն, 1950, սեպտ. 15, էջ 1:
35 Անդ:

րին: Նորից անդրադառնալով ամսագրին՝ հոդվածագիրը տալիս է նրա ճիշտ գնահատականը. ««Էջմիածնի» խմբագրականները, որ այնքան ձեռնհասութեամբ կիմբագրվեն, մենք միշտ հաճոյքով կը կարդանք եւ միանգամայն շատ լաւ կը տոգորուինք անոնց կրօնաբարոյական, ազգային-եկեղեցական, նոյնիսկ քաղաքական-ընկերական հարցերի շուրջ ի յայտ բերած բարձր հասկացողութեամբը, սրբազան հայրենասիրութեամբ ու առաջնորդի խորագիտութեամբը: Ամեն հայ պիտի զգայ անտարակոյս կարդալով սա տողերը, որոնք հարազատ մեկնաբանութիւնն են Հայ Եկեղեցւոյ էութիւնն ու գոյութիւնը, եւ որոնց զորավիգ կիանդիսանա Ամենայն Հայոց Հայրապետի խաղաղութեան ի նպաստ ոգորումին»[36]:

***

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Գէորգ Զ. Չորեքչեան Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության շրջանում կարողացավ հաղթահարել Խորհրդային Միության իշխանությունների հետ փոխհարաբերություններում առկա մարտահրավերները՝ նոր ուղեգիծ նշագծելով Հայ Եկեղեցու եւ հետեւապես Հայ ազգի գոյատեւման, հարատեւման եւ զարգացման համար: Հընթացս այս նպատակների իրագործման՝ կարեւորագույն քայլերից մեկը պետք է համարել կրոնական եւ հայագիտական հանդեսների շարքում իր ուրույն տեղն զբաղեցնող «Էջմիածին» ամսագրի ստեղծումը:

36 Անդ, էջ 2: